Հայտարարություն

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու Գ.Սարյանի անվան N24 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ

Դպրոցում առկա են հետևյալ ժամերը

«Իմ հայրենիքը» – 5-րդ դասարան՝ **3 ժամ:**
Թվային տեխնոլոգիաներ, համակարգչային գիտություններ (ԹԳՀԳ) – 5-9-րդ դասարաններ՝ **5 ժամ:**
Տեխնոլոգիա – 5-6-րդ դասարաններ՝ **2 ժամ:**
Կերպարվեստ – 5-9-րդ դասարաններ՝ **3.5 ժամ:**
Ռուսաց լեզու – 7ժամ
3-րդ դասարան՝ **2 ժամ:**
6-րդ դասարան՝ **3 ժամ:**
8-րդ դասարան՝ **2 ժամ:**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),

- 1 լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում).

- «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի պահանջով հերթական ատեստավորման արդյունքում աշխատանքից ազատված լինելու դեպքում՝ հերթական ատեստավորումն անցած լինելու մասին տեղեկանք.

- «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետով) պահանջվող համապատասխան փաստաթուղթ.

ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում մասնակցին:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը :

Փաստաթղթերն ընդունվում են **2026թ. հոկտեմբերի 7-ից մինչև հոկտեմբերի 21-ը, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը,** բացի շաբաթ, կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2026 թ. հոկտեմբերի 23-ին, ժամը 16:00-ին**, «Գյումրու Գ.Սարյանի անվան N24 հիմնական դպրոցում, հասցե՝ Շիրակացի 173:

Տեղեկությունների համար զանգահարել 094646961 հեռախոսահամարով: